

115

1 ≠ = 331 = 157

„ԳՅՈՒՂԱՅՈՒ ԳՐԱԳԱՐԱՆ“ № 50



№ 1364  
581.

ՆՈՅԵՄԲԵՐԻ  
ՃԱՆԱՊԱՐՅԻՆ

(Ժ Ո Ղ Ա Յ Ո Ւ Գ Ր Ա Ն)

h =

ՀՈՂԱՅՈՒՆԻ ԳՐԱԳԱՐԱՆԻ ԻՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ե Ե Ե Կ Ե Ե

1928

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԳԱՐԱՆ»-Ի  
ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԳԵՐԸ

1. Ուղեցույց անառաչին աշխատավորի 50 կ.
2. Ս. Շազուհեցի — Մեր անելիքները (սպառված) 20 »
3. Հ. Փիլոսոփայան յեզր. Ս. Մեղիկյան — Ինչու  
ձեռնառու չե գործարանում յուր և շփույց.  
պանիր պատրաստելը (սպառ.) 3 »
4. Հ. Փիլոսոփայան — Խոտարույները և նրանց  
մշակութայն յեղանակները (սպառ.) 10 »
5. Խ. Ավգալբեգյան — Հ. Ս. Ս. Հ. Հողային  
Որենսդիրքը, բացատրական հարց ու պա-  
տասխաններով. մասն առաջին, աշխատավոր-  
ական հողագտազործութուն (սպառված) 40 »
6. Պ. Հեֆիմյան. — Թիֆլիսի մշակութունը 10 »
7. Պ. Հեֆիմյան. — Շերամի վորդը, նրա կերա-  
կրելն ու խնամքը 10 »
8. Խ. Սերիցյան. — Կաթնատնտեսության գործ-  
նական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) 1ա. 50 »
9. Կ. Մելիք-Շահնազարյան. — Միախոտի մշա-  
կութունը 20 »
10. Ս. Ֆրիգոլին. — Տառ պատգամ անասնապահին 20 »
11. Խ. Սերիցյան. — Անհատական, թե՛ կոոպ. կաթ-  
նատնտեսություն 10 »
12. Հ. Հարություն. — Բատրակ, կնքիր պայմա-  
նագիր (չափածո) (սպառ.) 5 »
13. Մ. Թումանյան. — Շարքացանքը և նրա նշա-  
նակությունը 15 »
14. Խ. Սեր-Ներսիսյան. — Ինչպես մշակել խա-  
ղողի ալկոհոլները (28 նկարով) (սպառ.) 35 »
15. Սերեմեթոս զեպի գուր. — Անդրկովկաս-  
յան Յերկրային Կոմիտեյի բանաձևը զյու-  
զացիական հարցի մասին, Ս. Շազուհեցի  
նախարարով (սպառված) 14 »
16. Հայաստանի Կոմունիստական կուսակցու-  
թյան Կենտրոնական Կոմիտեյի Չորրորդ  
Պլենումի Բանաձեպերը (սպառված) 15 »

1194

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր Ի  
Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Յ Ի Ն

(ԺՈՂՈՎԱԾՈՒ)



ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրառեպոզիտ 471 բ.

Տիրաժ 2000

Պետերատի 2-րդ տպարան Յերեվանում—449

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայաստանի խորհրդայնացման յոթնամյակի յեվ  
Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի առթիվ  
«Մանկար»-ի թղթակիցները ուղարկել են իրենց հիշո-  
ղությունները դաշնակցական տիրապետության յեվ  
Հայաստանի խորհրդայնացման որերից: Բազմաթիվ  
թղթակցություններից միայն այս ժողովածուն կազ-  
մելով, խմբագրությունս նպատակ է ունեցել գյուղա-  
ցիների իսկ հիշողություններով վեր հանել մեր  
անցյալի պատկերը:

Տեխնիքական պատճառներով ժողովածուի հրա-  
տարակությունը ուշացել է:

Ժողովածուն խմբագրել է ընկ. Ակսել Բակունցը:

Խմբ.-Հրատ. Կոլեգիա



4194-ԱԳ-Դ



## ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՈՐԵՐԸ ԼՈՒՎԱ ՁՈՐԵՐՈՒՄ

1.

Անմտտանալի չին են աօրիները, վո՛ւ սե-  
լավի պես չեկան: քանդեցին, սով ու կատորած  
բերին մեզ: Հետո ել բայլչեկն յեկավ: Ճիշտ է,  
են աօրիներում գյուղը քանդվեց, բայց և ընդ-  
միշտ ս գաավեց և հասկացավ, թե ո՞վ է իր  
պաշտպանը:

Սուսեմ ի՛ տեսածից: Հայրս մի աղքատ կոշ-  
կակար եր, աշխատում եր Ախթալա կայարա-  
նում: Մի որ ել հավարն ընկավ, թե տաճիկնե-  
րի գորքը գալիս է: Հայրս կես գիշերին յեկավ  
տուն ու մյուսների հետ մենք ել փախանք մեր  
գոմահանդերը, վորը գյուղից հեռու չե, մթին  
ձորերում:

Մի եշ ունեւինք, վրան բարձել էինք մի  
պարկ ալյուր ու քնելու շոր: Հավար եր ընկել,  
ենպես շատպում ելինք: Հայրս եշի առաջից կը  
գնում, հացի կտորտանք կը ապիս և բշու-բշու  
աւելով եշին բաշում: Վերջապես մի կերպ հա-  
սանք մեր գոմերը: Մի բանի որ հետս վերա-  
դարձանք: Հավարը սուտ եր, տաճկական գու-  
քը յերկաթուղով յեկել անցել եր... Յեվ մենք

ենպես եյինք կարծում, թե ել փորձանք չի լինելու, ամեն ինչ վերջացավ, անցավ:

Լսում եյինք, վոր Յերեւանում հայոց կառավարութիւն կա: Մոտում եյին, վոր ել կոխի չի լինելու: Մի որ ել մի դաշնակցական յեկավ մեր գլուղը, ճառ ասաց: Ճառ եմ ասում, դու ուշունց հասկացիր: Մեր որում իսկի չեյինք լըսել, վոր հայը վրացու հետ թշնամի լինի: Իսկ նա ճառ եր ասում, թե մենք պիտի կովենք մինչև արջան վերջին կաթիլը, հայրենիքը պիտի փրկենք:

Գլուղացիք նրա խոսքից հետո շիվար մնացին: Վոնց վոր սառը շուր ածես:

— Այ մարդ, հենց գիտենաս եստեղ կովի հոտ կա...

Եղպես ել յեղավ: Չմուսնը մի ցուրտ գիշեր լսեցինք, վոր մենչեկիների գորքը հասել է Ծահալի: Առավոտյան գորքն արդեն գլուղումն եր: Նրանց մեջ շատերը մեզ նման գլուղացի եյին, տուն ու տեղից կտրված, են ցրտին մեր սարերն ընկած: Գալիս եյին թոնրի մոտ տաքանում եյին և վրացերեն իմացողներին գանգատվում իրենց վիճակից:

Ոֆիցերներն եյին կատաղի: Հրամայում եյին սրա-նրա դուռը կոտրել, կրակ անել, չափարն եյին քանդել տալիս, ուտելիք պահանջում, — մի խոսքով պատուհաս եյին դարձել Շընոդի գլխին: Դե մեր գլուղում ել կային մար-

դիկ, վորոնք ախպերացել եյին նրանց հետ և աշխատում եյին հանգամանքից ոգտվել, աղքատին ճնշել, նրա ուլը խլել և ուղարկել ոֆիցերին, նրան տունը քանդել: Մատնութիւններ եյին անում, անարդար տեղը սրան-նրան ծեծել տալիս:

Ո՞ւմ ասենք: Հենց են եր, վոր իրար տեսնելիս գլուղացիք առաջ մի չորս կողմ եյին նայում՝ տեսնեն հո ուրիշը չի լսում, և հարցնում.

— Բա վոնց կլինի մեր ճարը...

— Թե մեր աղերքը մի բան անեն...

## 2.

Մեր գլուղում են տարին կոմունիստներ քիչ եյին: Ծածուկ եյին ապրում տներում, մարագներում եյին պահվում: Թեև թվով քիչ եյին, բայց շահեկները նրանց կողմն եյին: Նրանց պահված տեղը շատերը գիտեյին, բայց մենչեկիները յերբեք չիմացան: Թե իմացել եյին, քարով կըպանեյին:

Շնոդի դրութիւնը գնալով ծանրանում եր: Բողոք բողոքի վրա յեր: Ել համբերել չեր լինում, հենց մի նշանի եյին սպասում, վոր ապստամբեյին ու մենչեկիներին գուրս քշեյին:

Մենչեկիներն այդ գիտեյին և ճնշումն ավելի եյին խստացնում: Նրանք լսել եյին, վոր գլուղում բալչեկիներ կան, փնտռում եյին, տրները խուզարկում, սրան-նրան բանտարկում,

բայց վոչ վոք չեր մատնում: Իսկ այդ խուզարկությունների ժամանակ ինչեր չէին անում:

Մի գիշեր ել, յերբ գլուզը քնած էր, բալլչիկները հավաքվեցին գաղտնի ժողովի: Հենց եզ ժողովում վորոշում արին հավաքվել մի ապահով տեղ, հեռանալ գլուզից և այնտեղից կապվել հարևան գլուզի հետ, կազմակերպվել և ապաստամբությունը պատրաստել:

Մյուս առավոտ գլուզացիք իր սր տեսնելիս իմաց ելին տալիս, իրար ակամջի փսփսում:

— Մերոնք գնացել են Կուզմանա գոմերը...

Կուզմանա գոմերը գլուզից հեռու չեն, անտառների մեջ: Ենտեղ ավելի ազատ էր, շատ գնացող չեկող չկար: Եստեղից սուրհանգակներ ելին գնում կողքի գլուզերը լուրեր տանում, բերում: Ամեն գլուզում էլ բալլչիկ կար և ամեն տեղ էլ պատրաստություն ելին տեսնում:

Կուզմանից գիշերով ծածուկ մեզ մոտ էլ ելին գալիս նրանցից ելինք մենք իմանում, թե Ռուսաստանում զրությունն ինչպես է, ինչ կրոնիքներ կան: Ենպես ելին վոզեկորվում և անհամբեր սպասում, թե չերբ են նշան տալու:

Կուզմանա գոմերում ապրողները լավ որ չէին քաշում: Ասենք են ժամանակ գլուզի մեծ մասն էր սոված, Բայց նրանց զրությունը ա վելի վատ էր: Պատահում ելին որեր, վոր վոչ նրանցից էր մարդ գալիս, վոչ էլ գլուզից էր

մեկն ու մեկը գնում: Յեվ մնում ելին սոված, ծարավ: Շատ ապամ վաչրի պտուղներով են յուր գնացել, հավաքել են զկեռ և ուլիչ պտուղներ:

Վշուղը նրանց սպասում էր. մեր միակ վերլուծյունը Կուզմանա գոմերից պիտի գար: Բայց ունևորները, են հին գալլերը Կուզման գնացողներին չէին սիրում Վախենում էլ ելին ափաշ կարա իրենց թշնամությունը ցույց տան, միայն ծաղրում ելին, սրան նրան համոզում, վոր բալլչիկները վոչինչ չեն կարող անել, Ռուսաստանում նրանց կոտորում են, եսորեպէսց ուսաց թագավորը պիտի թախտին նստի և աժեն ինչ ելի հին կարգով պիտի գնա: Յերբ վեճ էր բացվում, նրանք ծիծաղի ելին գցում «ընկերներին», ասում ելին, վոր նրանք Կուզմանա անտառներում զկեռ ուտելով կմեռնեն:

Հենց վոր տեսնում ելին մի գլուզացու, վոր անհամբեր սպասում է, թե չերբ են Կուզմանից նշան տալու՝ նրանք ծաղրելով ասում ելին.

— Հը վոնց ես... Ընկերներ, Կուզմանա են յերեսին զկեռ կեր...

— Ձերը զկեռ ուտելն ա, դուք հաղթողը չեք...

Եզպես մի իրիկուն էլ, գլուզում ճրագներն արգեն վառել ելին, չերբ յեկավ Սարգիսը, վոր Կուզմանից էր գալիս:

— Ես դիշեր պատրաստ կացեք, գալու ենք...

Լուրը իսկույն տարածվեց: Տնե-տուն գր-նում ելին, հավատարիմ մարդկանց իմաց անում: Այդ գիշեր յերեխաներին սովորականից մի քիչ ել շուտ քնացրինք, տեղավորեցրինք տավարը, կերը տվինք ու դռները պինդ փակեցինք:

Մինչև լույս աղանջներս հրացանի կրակո-ցի յեր: Համարյա բոլորն ել առանց հանվելու նստել ելին տներում, ճրագները հանգցրել, հրա-ցանները պատրաստել:

Հանկարծ աղանջներովս ընկավ մի գինվո-րի հարայ ու կրակոցն սկսվեց:

Կրակում ելին սարերից, կրակում ելին փո-ղոցներում: Մենշևիկները հանկարծակի յեկան և սկսեցին փախուստը: Թաղվում ելին ձյունի մեջ, գլորվում, կանչում: Զինվորները չեյին լսում ո-ֆիցերների հրամաններին, ամեն մարդ աշխա-տում եր շուտ հասնել կայարան:

Սկսվեց Լոռվա ապստամբութունը...

Հետո բալլևիկն յեկավ ու մեր գյուղն ել մյուսների պես ընդմիշտ ազատվեց ծանր ո-րերից:

Վախրանգ Սյիխանյան

Շնող գյուղ, Լոռի-Փամբակ

## ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Մի որ հանդում գութանավար ելինք անում: Հանկարծ լսեցինք թնդանոթների և զնդացիլ-ների վորոտ. մի քիչ հետո մեր գյուղից մեկը գլխաբաց վազում եր դեպի մեզ և հեռվից ձեռ-քով անում, կանչում:

— Փախեք, հարայ, եկան...

Մոտ վոր յեկավ, պատմեց թե գյուղն ար-դեն դաշնակները շրջապատել են, փախեք ան-տառը: Գութանը տեղում թողինք, յեզները քշե-ցինք անտառը: Ի՞նչ տեսնենք... Ով ինչ կարողա-ցել է, փախցրել է անտառ, խորքերում թափվել: Մի քանի որ մնացինք, վախից չեյինք ել թողնում վոր եշերը խռանջեն: Ասում ելինք մեր տեղը կի-մանան...

Դաշնակների զորքը յերբ առաջ, գնաց քիչ-քիչ իջանք գյուղը: Մի քանի խմբապետներ դեռ մնացել ելին գյուղում: Ի՞նչեր չեյին անում: Ում տանը վոր գինի լիներ, տիրջը ձեծում ելին, յեթե կամքով չեր տալիս: Մեզ հարևան մի աղ-քատ ընտանիք էր ապրում, նրանց հայրը բաա-րակ եր: Մի որ ել տեսանք լաց են լինում, կան-չում: Յերեխաների մայրը մի հարայ եր տալիս,

լերեսը չանդռում... Հենց լաց լինող լերեխաների առաջ դաշնակները մորթել էլին նրանց մի հաս կովը: Ել ուրիշ վոչինչ չունեին:

Յես այդ ժամանակ չեզնարած յելի վախենալով մորթելուց, յեզները շաբաթներով անտառումն ելի պահոււմ: Թե գլուզ ել բերում ելի, մթին գիշերով ելի բերում:

Ահա յեկավ հրաշք՝ մի բայլշեիկ յեկավ: Գյուզն իրարով անցավ: Յեկավ ծածուկ ժողով արեց, սիրտ տվեց ու գիշերով ել գնաց: Իմ պառավ հայրս ել գրվեց բայլշեիկի ցուցակոււմ: Յեկ հենց բայլշեիկի գորբը մտոեցավ թե չե, ապստամբությունը սկսվեց, դաշնակները փախան:

Հայրս ե պատմում, թե նրանք իրար իմաց չեն տալիս:

— Քեյա, դուրբան, բեյա, կարմիր շներ յեկան...

Հիմա եզ շուն ասողներն իրենք են սոված շների պես քաղաքներն ընկած և սպասում են, թե յերբ ե Անգլիան կամ Թրանսիան իրենց բերանը մի վոսկր քցելու:

Արմենակ Ղազարյան

Վեդի գյուղ



## ԲԱՅԼՇԵՎԻԿ ՍԱՐԳԻՍԸ

(Իմ հիշողութիւններս)

Որը կամաց-կամաց սկսում եր լուսանալ: Պարզ չեղնքում աղոտ պլպլում ելին վերջին ասղերը: Գյուղի փողոցներում կյանքն արդեն սկսեւ եր յեռալ:

Սայլերի շարանը շարժվում եր դեպի դաշտ, հնձած ցորենը կրելու: Սարգիսը և հարեան Խեչոն նստած սայլերին գնում ելին դեպի արտ և խոսում ելին.

— Ետը կասես ել թոփի ձեն չկա, — ասում եր Խեչոն:

— Այ կտրվի դրա ձենը, խլացանք, քար ու քանդ ելանք, ասաց Սարգիսը ու խոր ախ քաշեց:

Նրանք խոսում ելին կովի, թնդանոթի, քար ու քանդ լինելու մասին ու քշում չեզներին:

— Դէհ մտալ ջան, գե, շրմփացնում եր Խեչոն յեզանմեջքին և շարունակում եր գրուցը:

Նրանք գրուցելով հասան արար, չեզները բաց թողին արածելու և սկսեցին սայլերը բեռնել: Սարգիսը սայլի վրա եր, իսկ Խեչոն չեզանոց խուրձերը վեր եր բարձրացնում, տալիս Սարգիսին:



— Քսան չոր... ու մնաց կանգնած:  
Հեռվից լավեց գնդակների ճարճատյուն:

— Ի՞նչ պատահեց: Խուրձն առե...

— Սուսս,—ասաց Սարգիսը, ձեռքը բերանին մոտեցնելով:

Յերկու հարևանները լուռ լուռ ելին: Յեվ յերբ ձայները լսեցին, նրանք սկսեցին խուրձերն ավելի արագ բարձել: Սարգիսն ելի համարում էր խուրձերը, վոր դարսում էր իրար վրա, բարձրացնում, ինքն էլ բարձրանում վեր:

— Ութսուն չորս,—ասաց Սարգիսը խուրձը տեղավորելով:

— Բնււ-բուււ, —հեռվից լավեց թնդանոթի վորոտը:

Քիչ հետո անխոս շարժվեցին դեպի գյուղ: Լուռթյունը խանգարում էր սալի անվերջ ճոռոցը և ճիպոտի շրմփոցը՝ հոգնած լեզուների մեջքին:

.. Գյուղից ներքև, ճանապարհին լերկաց փոշու ամպ, վոր ձիավորների հետևից սողում էր դեպի գյուղ: Նրանք հեռվից տեսան զույգ սալերը և ձիերի գլուխը դարձրին դեպի սալերը: Յեվ մի քիչ հետո հասան:

— Շուտ, դատարկի, պրծիր,— բղավեց ձիավորներից մեկը և ոգում ճոճեց մարակը:

— Ախր...

— Չահրումար ախր,—գոռաց մյուս ձիա-

վորը, և ընկերներին նշան արեց հեռելու իրեն: Սարգիսն ու Խեչոն ճանաչեցին խմբապետ Շարոյին, անխոս նայեցին իրար: Բեզարած լեզուները վորոճում էլին, թքի փրփուր թափում:

Յեվ այդ իրիկուն գյուղի սալերի մեծ մասը քշեցին դեպի «պոզից»:

Շատ որեր ցորենի դեզերը մնացին արտերում, անձրև լեկավ թրջեց ցորենը և խուրձերի մեջ ցորենը սկսեց ծլել:

Սալերը հեռ լեկան, լեզուները մի որ բանեցին ու նորից տարան:

... Աշուն էր: Սարգիսը նոր էր վերադարձել: Կին-լերեխա խառնվել էլին կալում և աշխատում էլին ուշ մնացած կալը վերջացնել: Նիհար լեզուները դանդաղ էլին շարժվում:

— Չեր ախր չ հերը... — Չղայնացած գոչում էր Սարգիսը ու լեզունով խփում լեզանը: Յեզը ցավից մեջքը կռայնո մ էր, տնքում, մի քիչ արագ փոխում բալերը, ապա նորից դանդաղում:

Կեսորն արդեն անցել էր: Սարգիսը շուտ-շուտ նայում էր դիմացի սարին, վորի լեռների ամպն իր գունչն էր ցցել:

— Մեկ վոր թխպեց, վերջացավ,—մտածում էր Սարգիսը և լեզուների վրա կանչում:

Հենց այդ ժամանակ զգիրը ներքևից ձեն տվավ:

— Սարգիս, չեղներդ պիտի տանես արդ...  
Շարույի հրամանն ա, չեկել են:

— Աբոզ, — խելագարի նման կանչեց Սարգիսը, — բա տո՛ւնս, կա՛լս... Վորտեղից եր, դուրս պրծան չերկու փոփոխավոր:

— Շատ մի խոսիր, — կանչեց մեկը և մտայնով չեղներն արձակելու:

— Ախր աստված կվերցնի... Գիշերն եմ չեկել արողից, թողեք կալս ծեծեմ: Հրես անձրիւր...

— Բեզ ասում են պիտի գնաս, պիտի գնաս:

Յերեխաներն սկսեցին լաց լինել:

— Չեմ գնա, — հուսահատ ճչած Սարգիսը և կախվեց լուծից:

Մտրակները բարձրացան իրար յետևից, շափշարափով իջան Սարգսի գլխին, ուսերին, մեջքին: Սարգսի կինը վրա վազեց, կախվեց մեկի թևից, ձգտաց, բայց մտրակավորը դեն հրեց նրան:

Սարգիսը թուլացած վեր ընկավ հասկերի վրա: Նրա գլխի վերքից արյունը հոսում եր ու դեղին ծղոտը ներկում: Փոքրիկը լաց եր լինում, իսկ կինը ծամերն եր փետում և անիծում:

Ուշաթափ Սարգսին տուն տարան: Ու յեզները նորից գնացին արդ:

...Շատ որեր չանցան:

Գյուղում պտտվում էին նոր, չլսած բաներ:

Մի գիշեր ել դուռը ծեծեցին: Խեչոն ալայված ներս մտավ:

— Սարգիս, գնում են...

— Ո՞վ:


— Խուժբերը...

— Դո՛րթ, ու տեղից վեր թռավ, չեզանն առավ, գլխաբաց դուրս վազեց...

Լուսաբացին կարծիր բանակը գյուղ մտավ: Առաջին շարքերում գալիս եր և Սարգիսը՝ յեզանը ուսին:

Յեզ ախ որից նրա անունը միաց բայլչեիկ Սարգիս...

Ալլահվերդի



Ստ. Սեփանյան



## 1920 ԹԻՎԸ ՇԱՄՇԱԳԻՆՈՒՄ

Դաշնակների ժամանակ Շամշագինում թալանն անպակաս էր: Տանում էլին վորի լծկանը, յերինջն ու կովը, վորի վոչխարը, նուշնիսկ մեղուն փեթակներով էլին տանում, մեղրն ուտում, ջարդված փ' թախը մեղուներով դեն քցում:

Գյուղացիք հրացանով էլին գնում վար անելու: Գյուղից հեռու գնալը հո մի կրակ էր: Մի անգամ էլ յեկան ու իմ հագիս արեխները հանեցին, թողին բոբիկ: Կոռն ու բեգյառը կար ու կար: Կոռի ժամանակ մեկն իր լծկանն էր ձորում թողնում, կամ թե տանում էլին կոռի, վերադառնում էր առանց լծկանի:

Գյուղացիք զրկվեցին վար ու ցանքից, խոտ հարելուց, աչգի բաղելուց: Դրա հետևանքն չեղավ սովը: Իսկապես վոր մարդ հիմա հիշում է զարմանում է, թե են ինչ սարսափելի տարի էր, են ինչպես դիմացանք...

Եզ հայում դեռ գալիս էլին ու ճառաբանում, թե Հայաստանը անկախ է, ազատ է և միացյալ, թե պետք է ամեն ինչ տանք հայրենիքը փրկելու և պաշտպանելու: Վախելուց ուռած կանչող-

ներ էլ էլին լինում, թեկուզ սոված փորով էլին կանչում: Մի որ էլ դաշտումն էլի: Հեռվից լսեցի կրակոցի ձայներ: Մեկ էլ տեսնեմ յերիտասարդութունը կարմիր նշանները կրծքերին վազում է:

— Ուր ե՞ս վազում, Հայկ,— կանչեցի:

— Գնում ենք դիմավորելու, — ասաց ու վազեց:

Հասկացա, վոր բայլշեիկներն են գալիս: Թողի ամեն ինչ ու վազեցի: Հասանք Բերդ. կարմիր բանակը նոր էր մտել: Ամեն կողմից թափվել էլին, միտինգ էր, ինչ միտինգ... Ուրախության անմոռանալի որեր էլին ..

Ու հենց եզ որից Շամշագինի համար սկսվեց մի նոր կյանք: Բայց այսօր մենք պարտավոր ենք հիշելու այն դժվարին օրերը, վոր տեսել ենք, և պետք է պատրաստ լինենք պաշտպանելու բանվորի և գյուղացու իշխանութունը: Յեզ պարտավոր ենք բարձր պահել այն կարմիր հաղթանակի դրոշը, վոր ներկված է մեր հազարավոր ընկերների արյունով:

Ռ. Գրիգորյան

Ներք. Կարմիր Աղբյուր

## ՊՐԱՆԱՆՅ ՍԱՔԻՆ

Նրա խսկական անուճն ազգանունը Պրանյան Սարգիս է, բայց գյուղում բոլորն էլ նրան կանչում են Պրանանց Սաքին:

Կուսի հենց առաջին տարին Սաքուն էլ տարան: Մայրը, կինը, չերեխաները մնացին յերեսի վրա, սրահնրա դռան: Շատ շանցավ՝ Սաքին յեկավ, ձեռքի մատերը կտորած: Թնդանոթը տարել էր նրա մատները, ինվալիդ էր զարձեղ և ընդմիջա ազատվել:

Սաքին տեսավ տան տկրորութունը, ալյուրի դատարկ պարկն ու մաշված, սովից դեղնած չերեխաներին: Վոչ ծախելու բան ուներ, վոչ էլ կարող էր աշխատանք անի: Հիմա էլ վոր Սաքուն հարցնես եդ որերի մասին, ունքերը կիտում է, կտրած ձեռքն աչքերին դնում:

— Գիշերը քունս չեր տանում, յերեխեքը վագստում եյին, մեկ քնում, մեկ զարթնում: Յեկած որս մերս գնացել էր Դանանց Վասիլի տնից մի քիչ հաց փոխ առել: Են էլ հաց չեր, թերմացք էր, կտորտանք: Չկարացի կուլ տամ...

Շատ միտք արի, մեկ էլ դուրս յեկա, հասա ժամի պատին, տեսնեմ Վասիլի տղեն պատին կանգնել է, պապիրոս է ծխում: Տեսա, ջանս մի տեսակ յեղավ, վոնց վոր փշաքաղվես... էլ յեա չեկա տուն: Հիմա միտք եմ անում, թե ես վոնց է գյուղում մնացել: Ինձ ասում եյին, վոր Վասիլը տղի համար Փալշիվի ծննդական է դուրս բերել, չեյի հավատում: Եդտեղ գլխի ընկա...

Պրանանց Սաքին հիմա պատմում է մինչև այս խոսքը և պատմությունը կտրում, ուրիշ խոսք ասում: Բայց շատերը գիտեն, թե ինչեր քաշեց նա, ինչ տանջանքներով կարողացավ չերեխաներին սովից ազատել...

Մի որ կարտոֆիլի պարկը ուսիս դաշտից տուն եյի գալիս: Գյուղին յերը հասա, տեսա, վոր մեղմանում բազմություն է հավաքվել, շիվան է, ազմուկ: Հենց վոր լուծեյին, լավում էր ազանքի խոսքեր և անվերջ՝ վայ, մեռա...

Քիչ վոր մտեցա, ճանաչեցի դաշնակցական լիազոր Ստեփանյանին, վորին գյուղի չերեխեքը «ալրոտ» եյին կանչում՝ սպիտակ միրուքի համար: «Ալրոտը» կանգնել էր պատի տակ և հրամաններ էր տալիս:

— Ելի, ելի... դե ասա, ընկերիդ անունը ասա...

Գետնին պառկեցրել էլին մի մարդու, վոտները բորկացրել, չերեսին սև նավթ քսել, կուրծքը մրտտել: Մարդու վոտ ու ձեռը կապտել են և վոտքի բաց մսերին ճիպոտներով, մտրակի հաստ թաթով տալիս էլին Գյուղացիներից շատերը շէլին կարողանում տեսնել, լսել ծեծվողի աղերսանքը, թողնում էլին հեռանում:

Հետո նրան վերկացրին, վիզը պարանքեցին և սկսեցին գյուղի փողոցներով ման ածել:

Միայն այդ ժամանակ չես ճանաչեցի Պրանանց Սաքուն: Մատերը կտրած ձեռքը դես ու դեն եր ման ածում, ուզում էր խոսի, բայց չէր կարողանում: «Ալրոտի» մարդիկը նրա յետևից խփում էլին, վեր քցում, նորից վեր հանում: Նրանց մեջն էր և Վասիլի տղան: Եղպես կիսամեռ գրությամբ նրան տարան, տան շեմքի մոտ վեր քցին: Ժողովուրդը ահից չէր մոտենում:

Պատճառն սկզբում չիմացանք: «Ալրոտի» մարդիկը և մանավանդ Վասիլի տղան ասում էլին, թե Սաքին կարտու է գողացել, դրա համար էլ ծեծում են: Բայց հենց վոր բալլչեիկներն չեկան, նոր միայն հասկացանք, վոր Սաքին էլ է բալլչեիկ չեղել ու դրա համար են նրան ծեծել: Յեվ մեր գյուղի խորհրդի առաջին նախագահը Պրանանց Սաքին չեղավ:

Դանանց Վասիլն իր «դովրեն» չի մոռացել: Հողերի բաժանքը չէրբ ընկավ, նրա հողերն էլ կտրեցին ու բոլորին հավասար նա էլ հող ստացավ: Բայց չհամաձայնվեց, սկսեց գողգողալ նախագահի վրա:

— Ես քու... մտիցդ ընկել ա, վոր կովից չեկար, սոված մեռնում էլիր: Հմի գեղի տերն չես դառել, ա՛ն թոփալ շան տղա...

Պրանանց Սաքին միայն մի գրություն գրեց շրջան: Դանանց Վասիլին տարան, մի բանի որ բանտ դրին: Յեվ ձենը կտրեց, հասկացավ թե բանն ինչումն է..

Աթան գյուղ

Սպեհգիար Սսիկյան



## ՄԵՐ ՇԵԿՈՆ

1919 թ. հունվար ամիսն եր: Ճանապարհները փակվել եյին, ձյունը մինչև կառուրն եր հասնում: Ցուրտ որեր եյին, իսկ գիշերը քամին քաղցած գայլի պես վռոնում եր: Թեպետ լուսնյակ կար, պարզկա յեր չերկինքը, բայց բութը չեր թողնում հարեանի տունն ել տեսնելու: Ամենավտխերիմ գուշմանիդ ել մի ժամ չեյիր թողնի դրում:

Այդ պիսի մի գիշեր հանկարծ մեր պատուհանը ձեծեցին: Մենք չորս չերեխաներով կուշ եյինք չեկել վերմակի տակ, իսկ հայրս պատուհանի մոտ եր պառկել: Հայրս նախ չպատասխանեց, բայց դրսից պատուհանին ավելի ուժեղ խիեցին: Յերեում եր, վոր ցուրտը նրան ել ե շատ նեղում:

— Ո՞վ ես, — կանչեց հայրս:

Մի հաստ ձայն դրսից կանչեց.

— Շուտ հելի, սելդ լծի, պաղվող պիտի չերթաս...

Հայրս լռեց, իսկ մենք ավելի կուշ չեկանք: Մի քիչ անց հայրս փորձեց դժգոհել, բայց ձայնը դրսից նորից բղավեց ու մտրակի կոթով սկսեց ձեծել ավելի պինդ:

— Քզի կասեմ, շուտ հելի, թե վոչ կաշիդ կը քերթեմ...

Հայրս անջարով վեր կացավ, ճրագը վառեց: Յես ել նրա հետ գնացի գոմ: Դուռը վոր բաց արինք, բութը քիչ մնաց մեզ խեղդեր ու դուռը պոկեր: Հայրս գնաց քրոջս ամուսնուն խնդրելու, վոր մեր սայլը լծի ու տանի: Քիչ հետո մեր Շեկոն ու Միշկան սայլը ձուռալով դուրս հանեցին:

Քսան որ լուր չունեցինք: Հարցնում եյինք՝ վոչ վոք պատասխան չեր տալիս: Մեր գլուղից շատերին եյին տարել և վոչ վոք գեռ չեր վերադարձել:

Մի որ ել հանկարծ իմաց ավին, թե սալերը գլուղի մոտ են, գալիս են: Առաջ գնացինք: Քիչ հետո սայլերը մոտեցան: Ի՞նչ տեսա. մեր սայլը դրել եյին ուրիշ սայլի վրա, Միշկան ել լծել եյին սայլատիրոջ յեզան հետ: Շատերի վտաքն ու ձեռքը ուռած, ցրտատար: Ասես գերութունից եյին գալիս:

Յերբ տուն գնացինք, փեսաս պատմեց, թե

ինչպես են բուքի հանդիպել, մի գիշեր մնացել են ձյունի տակ, մեր Շեկոն ել սառել է, անշնչացել: Պատմում եր, իսկ մենք լաց ելինք լինում: Հայրս մեզ սիրտ եր տալիս.

— Եսպես չի մնա, մի արև կբացվի...

Գարունը բացվեց և այդ տարին իսկապես վր մեզ համար ազատության արև բերեց:

Հանգում ման գալուց հանկարծ տեսա վուկորները մի կույտ, ճանապարհի կողքին: Յես կոտորներին ճանաչեցի, վոր մեր Շեկոն եր:

Հիմա չել գյուղի կատարածուն է գալիս պատուհանը ձեծում: Բայց հայրս ել չբբեք չի արանջում:

Պողոս

Հակ. Մկրտչյան



## ԻՍ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Հիշում եմ այն 1919—20 թվերը, չերբ մեր գյուղը դառել եր պատերազմի դաշտ: Խմբապետ Յապոնը դարձել եր Դարալագյազի թագավորը: Գեներալ Մելիք Մուրադովը, գնդապետ Կաֆիկը և Արամ աղեն իմ ծննդավայր Ռինդ գյուղում տեր ու տիրական ելին, ասես ժողովուրդը ստրուկ եր, իսկ իրենք աստված:

Հավաքում ելին մեր գյուղի և գավառի 15-ից մինչև 60 տարեկաններին և ուղարկում հարևան թյուրք գյուղերի դեմ, իրենց գրպանի շահի համար: Չեմ ասում ինչքան զոհ գնաց մեր գավառից: Միայն մեր գյուղից մի որվա կռվում 35 հոգի սպանվեց և 14-ն ել վիրավորվեց:

Բայց բայլը կիներն արդես մոտենում եին: Գնդապետ Կաֆիկը, Արամ աղեն և մնացածները քարոզում ելին, սուտ լուրեր տարածում, թե բայլը կիները մարդասպաններ են, կացիններով են գալիս, կին և ընտանիք չեն ճանաչում, չեկեղեցին ախոռ են շինում և ալլն: Խոսքի հետ միասին նրանք պլետով ել ելին գործ անում, ձեծով ժողովրդին անից զուրս անում, քշում դիրքերը:

1921 թվի մարտի վերջին մենք լուր ստացանք, Վոր բայլշեիկները գրավել են մեր հարեվան Արփա գյուղը և հարձակվելու չեն մեր գյուղի վրա: Սմբապետները բուն ու գաղար շունեյին, փողոցում մի մարդ տեսնելիս՝ իսկույն բռնում եյին, բշում դիրքերը: Շատերը ճանապարհից էյին փախչում, վորովհետև չեյին ուզում կռվել բայլշեիկների դեմ:

Մեր գյուղացի Արամայիսը, Պարուչը, Համոն, Արզամը ծածուկ կապ ունեյին բայլշեիկների հետ: Նրանք մեզ հետ եյին, խրամատներում, ցույց եյին տալիս, թե իբր կռվելու չեն բայլշեիկների դեմ, բայց և գաղտնի կազմակերպում եյին:

Յեվ հանկարծ բայլշեիկները դրոհի ժամանակ գնդացիքը շուռ տվինք զաշնակները վրա...

Յես մի բան միայն կասեմ: Մեր գյուղը առաջ ել շատ հետամնաց եր, մութ: Իաշնակները միշտ կռվի մեջ եյին պահում և դպրոցի մասին չեյին ել մտածում: Միայն հեղափոխությունն եր, վոր մեզ տվեց և՛ դպրոց, և՛ լիկիայան սնդրագետների համար: Մնացածի մասին չեմ գրում:

Առաջել Հարուքյուեյան

Կապի վաշտ



## ԻՆՉ ՍՏԱՅԱՆԲ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՅՈՒՄԻՑ

Լրացավ 7 տարին, չերբ Ն. Շեն գավիթ գյուղը վայելում ե Հոկտեմբերյան հեղափոխության պատուհները: Տ մենք թե ի՜նչ դուրսյան մեջ եր գյուղը հեղափոխությունից առաջ և ի՜նչ ստացավ:

Ն. Շենգավիթի բնիկների թիվը 35 ծուխ եր, հողի տարածությունը՝ 262 դեսյատին: Այդ քան հողի մեծ մասը գտնվում եր գյուղի 3-4 տնտեսությունների ձեռքում: Իսկ մնացած ծխերը կամ բոլորովին հող չունեյին և կամ ել վատ հողերն եյին ստիպված մշակում: Դրությունը ավելի ծանրացավ, չերբ պատերազմն սկսվեց, զաթականներն չեկան:

Մեր գյուղում տեղավորվեցին և 90 գաղթական տնտեսություն: Նրաք բոլորն ել պարապում եյին բատրակությամբ սրովարձ բանվորությամբ:

Դյուղը դպրոց չուներ, իսկ լեկեղեցի կար: Հարուստն իր վորդուն ուղարկում եր Յերեան, ազգարնակչության մեծ մասն անգրագետ եր: Յեվ գիր չիմացող գյուղացու գլխին ո՛վ ի՜նչ ուլին ասես սարքում եր:



Ի՞նչ ստացանք խորհրդայնացումից:

Գյուղում կատարվեց հիմնական հողաշինարարություն: Հողերը հավասարեցրին և գաղթական տնտեսություններին ել հող տվին: Նրանք վորոնք տուն չունեին և վոչ ել տնատեղ, այժմ ընդարձակ տնատեղեր են ստացել և գյուղը լենթարկված է հատակագծման:

1924 թ. գյուղում կառուցված է մի մեծ դպրոց, վորտեղ առաջին հերթին չքավորի ուսման ծարավ լերելսան է սովորում: Մենք կառուցել ենք խրճիթ-ընթերցարան: Յերեկոները աշխատանքից տուն գալուց հետո, գյուղացին մանում է խրճիթը, իմանալով թե ինչ կա դրսի աշխարհում: Իսկ յեկեղեցու միայն քանդված պատերն են մնացել և վոչ վոր այդ մասին դարդ ել չի տնում:

Ի հարկե, հին ու նոր գալլեր գյուղում գեուկան, բայց նրանք լավ պիտի իմանան, վոր չքավոր գյուղացին բանվոր դասակարգի շնորհիվ ստացած հեղափոխության համար շատ է արյուն թափել և տանջանք քաշել: Այդ հեղափոխությունը նա կպաշտպանի իր կրծքով և թույլ չի տա, վոր թշնամին իր հանգիստը վրդովի:

Ն. Շենգավիթ գյուղ  
Յերևանի գավ.

Հ. Բարսեղյան



### ՅԵՐԲ ՎՈՐ «ՏԱՊՈՐԻՍՏՆԵՐԸ»-ՅԵՎԱՆ...

Այգատարիները հիշելիս նորանոր վերքեր են առաջանում: Այն ինչ գժոխք եր... Յորեն չկար, հողերը մնացել էին առանց սերմելու, ընտանիքները մերկ, նավթ չկար, չիր ու շաքարը մոռացել էին, կորեկ հացը համեղ գաթա չեր: Տկյորությունից կին ու աղջիկ ամաչում էին աղբյուրը գնալ. ւպատում էին մինչև մութն ընկներ:

Որեցոր սպասում էինք ազատարար կարմիր բանակին: Բայց շատերն ել վախենում էին և հավատում գաշնակ պրոպագանդիստների ճառերին: Ի՞նչ էին ասում նրանք:

— Կարմիրները թալանչիներ են: Ում յերկու կով լինի, մեկը պիտի առնեն, կաշաված են, ընտանիքի յեն ձեռք տալիս: Նրանք «տապորիստներ» են, կացնով են մարդու գուլթ թըոցնում...

Այդպես ճառում էին, բայց և թալանում ափաշկարա, մարդ ծեծում, տուն վառում: Ժողովուրդն ահ ու սարսափի մեջ եր և շատերն ասում էին, թե թոզ գան, մի տեսնենք բայլչեփիկներն ինչ տեսակ մարդիկ են...

Այդ որը չեմ մոռանա: Առավոտ կանուխ  
դաշնակները չբացան, կորան: Բայց կարմիր բա-  
նակը դեռ չեր լեկել: Գլուզացիք հավաքվել  
եյին փողոցում և սպասում էյին, թե ի՞նչ է լի-  
նելու: Հեռվից հրացանի հաս ու կենտ կրա-  
կոցներ եր լսվում. չերբեմն ել վորոտում եր  
թնդանոթը: Գիտակ մարդիկ փորձում էյին ձայ-  
նով վորոշել, թե կոխվը վճրտեղ է:

Հանկարծ մի ձիավոր յերևաց գլուզի ծալ-  
րին: Շատերը վախից ներս մտան, գոնեքն ել  
պինդ փակեցին: Կառուրների վրա կանգնած կա-  
նայը իրար հը՛յով իջան ներքև: Զիավորն այդ  
կարծես նկատեց ու ձայն տվավ.

— Մի վախենա՛ք, դուք արդեն փրկված եք...

Մոտեցավ ու մեր հարևան Սեդրակի տան  
առաջ կանգ առավ: Դռան արանքից չես նայում  
եյի: Զիավորն իջավ, սանձը գցեց ձիու գլխովը  
ու սկսեց դուռը բաղխել: Մայրս ինձ վրա բար  
կացավ, թե ինչու ներս չեմ գալիս: Հրացաննե-  
րի հաս ու կենտ ձայները շարունակվում էյին:

Մի պատուոտած շինել եր հազին, հրացանն  
ուսին: Վորքան ուզում էյի ճանաչել նրան, չեյի  
կարողանում: Մորս կանչեցի ու չերբ նա մոտե-  
ցավ դռան արանքից նայելու, Սեդրակենց դուռը  
բացվեց, նրանց պառավը «վսյ բալաս» ասեց ու  
ձիավորը ներս մտավ:

— Սերոբն եր, — ասաց մայրս և վազեց  
Սեդրակենց տուն: Նրանց կորած տղան եր, վոր  
դաշնակների հայածանքից փախել եր գլուզից  
ու կորել: Տանը նրան սպանված էյին համա-  
րում: Գլուզացիք իրար մեջ փսփսում էյին, վոր  
նույն իսկ Սերոբի զիակը տեսնող է չեղել: Այդ  
լուրերը հասնում էյին պառավ մոր ականջին ու  
մայրը միշտ լայիս եր:

Հանկարծ մեկը ներս վազեց.

— Զիավորներ են գալիս... մի ծերը չի լե-  
րևում, թոփեր ել կան:

Բոլորս նայեցինք Սերոբին: Նա ժպտալով  
ասաց.

— Կարմիր բանակն է... Դաշնակները փա-  
խել են:

Ու չերբ ձիավորների առաջին շարքը մեր  
փողոցը մտավ, Սերոբն ել չեա մնաս բարով ա-  
սաց մորը, ձին նստեց ու միացավ նրանց: Մայ-  
րն ինչքան եր ազաչում; վոր մնա, չգնա:

— Կոխվը հո մենակ բեզ չեն տվել...

Բայց Սերոբը գնաց: Կարմիր բանակը մեր  
գլուզում կանգ չառավ, ձիավորները շտապում  
էյին հասնել թշնամու նահանջող զորքին:

Յեվ չերեկոյան առաջին անգամ մեր գլու-  
զում միտինգ յեղավ: Հավաքվեց անպին բազ-

մութիւնն: Շինել հագած մի չերիտասարգ սկսեց  
քացաարել, թե ինչ են ուզում բաշխիկները:

— Ես հո մեր սրտիցն եր խոսում, — ասում  
եղին գյուղացիք ասուն դառնալով: Իս մի մար-  
դու գլուխ ելա չկարեցին...

Շատ տարիներ են անցել և այդ անցած  
տարիներում մեր գյուղում կատարվել է հողա-  
բաժանութիւնն, վորի համար քանի-քանի մար-  
դու յեն պրիստավները ծեծել առաջներում, չերը  
հող չունեցողը հարուստից հող եր ուզում: Նոր  
ճանապարհ ե շինվել, գյուղում կառուցված է  
գարոցի նոր շէնք, ունեք գյուղխորհրդի նոր  
գրասենյակ և վերջապես այգեգործական ընկե-  
րութիւնն, շուտով կազմակերպելու յենք արակ-  
տորի ընկերութիւնն:

Ահա թե ինչ ավեց մեզ Նոյեմբերը յոթ  
տարվա ընթացքում:

Հաջի Ղարա  
Եջմ. գավառ

Գուրգեն Սարգսյան



## ԻՆՊԵՍ ԱԶԱՏՎԵՑՈՒՆԲ ԲՅՈՒՎԱՅԻ ՊԼԵՏԻՑ

Ձմեռ ժամանակ ողաներում, չերը գյուղա-  
ցիք նստոտում ելին և յոթ գլխանի դեերի պատ-  
մութիւնն անում, նրանց գրուցին ականջ անող  
մի չերեխա չեթե հանկարծ լաց լիներ կամ մո-  
քը հակառակեր, մյուսները պիտի սաստեյին և  
ասեյին.

— Ձենդ կարի, թե չե քյոխվեն կլսի...

Այդ միայն սպառնալիք չեր: Քյոխվաչից  
վախենում ելին վոչ միայն փոքրերը, այլ մե-  
ծերը, վորոնցից վոմանք սարսափն ավելի ուժե-  
ղացնելու համար, ասում ելին, թե քյոխվեն  
ասածու փոքր չեղբայրն է, ինչ ուզենա աչն ել  
կանի:

Մեկ ել տեսար քյոխվան գզիրին կհրամայեր,  
թե այսոր Ախտայից պրիստավը պիտի գա,  
գնա մի վոչխար բեր: Գզիրն ել գնում եր վոչ-  
խարի հոտի առաջը կարում, լավը ջոկում: Խեղճ  
հովիվների հոգին խոմ Ռնդամալի դարբինը չեր  
շինել, վոր ասեյին, մենք չենք կարող տալ ու-  
րիշի վոչխարը:

Գրիբը վոչխարը շոկելուց հետո, բարկանում էր նրանց վրա.

— Շուն շան վորդիք, յես ձեր համբայը չեմ, վոր շալակեմ, տանեմ... Շալակեք և առաջս ընկեք:

Հովիվը շալակում էր վոչխարն, առաջ ընկնում, վոչխարը քյոխվի բակը գցում ու նորից փախչում, վոր քյոխվեն շտեսնի ու չծեծի:

Մեր գյուղացի Մամիկոն Ստեփանյանին 1918 թ. մի անգամ այնպես ծեծեց, վոր այն որից մինչև հիմա Մամիկոնը վոչ կենդան է, վոչ էլ մեռած: Լեզուն բռնված, խելագարի նման, ամառ ձմեռ թոնրի մոտ է պառկում... Իսկ Մամիկոնը 6 շնչանոց ընտանիքի միակ կերակրողն էր: Ճիշտ է, Յերեսանի սոցապը և գյուղի փոխօգկոմը ողնում են նրանց, բայց աշխատող շունեն և անե տուն են ընկած, ծայրահեղ թշվառության մեջ:

Ահա թե ինչ արեց քյոխվի պետը:

Նա մի սովորութուն ուներ. կանչում էր մեկին իր մոտ, և ծեծի սպառնալիքով ստիպում, վոր այս ինչից գանգատ տա և սուտ հայտնի, վոր նա գիշերով յեկել է իրեն մոտ, ապրանք տարել: Գյուղի վորբեփայրի կանանց նա ստիպում էր գանգատ տալ, թե այս ինչն ուղեցել է գիշերով իրեն մոտ գալ:

Արինակ. մի որ նա կանչում է Շաշին Մարգարյանին և այսպես ասում: Շաշինն ասաց.

— Քյոխվան ապրած կենա, ախր յես ինչպես շառից ասեմ... Հոգի ունեմ տալու, յես չեմ անի:

Այս խոսքը չվերջացրած քյոխվեն հրամայեց նրան մերկացնել: Ամբողջովին տկորացրին, վոտքի մեկը կապեցին մի սյունից, մեկելը՝ մյուս սյունից: Յեվ ծեծեցին մերձ ի մահ:.. Շաշինը մինչև հիմա չեղ այն ծեծից հետո լավ որ չի տեսնում:

Յերբ սովեաները յեկան, քյոխվան կորավ, խոսքս չքացավ:

Ն. Ախտա

Մ. Մկրտչյան



## ԲԱՂԱԲԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻՑ

(Եւ հիւսուցութեան)

Մեր գունդը հրածան եր ստացել զիշերը հարձակում գործելու դաշնակների զորամասի վրա: Կրօնն սկսվեց լուսաբացին և յերբ արևը դուրս չեկավ, մենք արդեն գրավել էինք Բողբուռուտնի և Սոր վիրապի բարձունքները:

Դաշնակներն անկարգ նահանջում էին և մենք հետապնդում էինք նրանց: Մեր գրությունը ծանր եր, շատերը վերարկու կամ շինել չունեին, շատերը վոտաբաց էին, ծածկված արեխններով: Բազմն էլ մի կողմից եր նեղում:

Մենք զիշերեցինք Ազգամյարի մոտակա ձորում, ձյունի մեջ: Պարզկա զիշեր եր և սառը քամին ածելու պես կտրատում եր մեր բաց վոտները:

Լուսաբացին հարձակումն սկսվեց, դաշնակները նահանջեցին մինչև Բզովանի բարձունքները և գիրքերում ամրանալով, սկսեցին ուժեղ դիմադրել:

Ձինկոմը կարգադրեց նվագախմբին փշել փողերը: Արևը մայր եր մտնում, այն ինչ մենք պիտի դրավելինք Ազրաշը: Նվագախումբն առաջ ընկավ: Մեր վոգևորությունն աննկարագրելի եր: Ձյունի մեջ թաղվելով, սառած առունների վրայով անցնելով, թեկուզ սառուցն էլ ջարդվում եր և մենք շուրն էլինք ընկնում,—գրոհի գնացինք:

Նվագի հնչյունների տակ սվինամարան բուկավեց... Քիչ հետո Ազրաշի բարձունքները մեր ձեռքին էլին:

Յե՛վ այն օրից այդ մարշի անունը մնաց Բզովանի մարշ:

Ստիպված էինք գիրքերում զիշերել, թրջված, վոտաբորիկ, առանց ուտելիքի: Ձի կարելի նկարագրել, թե ինչեր քաշեցինք այդ զիշեր, մինչև լույսը բացվեց: Մեր դրությունն ավելի ծանրացավ, յերբ հայտնի յեղավ, վոր քիչ փափուշա ունենք:

Իսկ դաշնակները Բաշ-Գառնուց նոր ուժեր էլին ստացել: Դիմադրելը դժվար պիտի լիներ, և յերբ նրանք հարձակման անցան, մենք կովելով սկսեցինք նահանջել: Բաց մեզ համար ավելի ծանր մի լուր եր պահված:

Հանկարծ հայտնեցին, վոր ծանր վիրավորվել է զիվիլայի զինկոմը՝ ընկ. Մխչյանը, վոր

րին բոլորն ել ճանաչում ու սիրում ելին: Նրան տարել ելին Նախիջևան:

Կարմիր մարտիկների վրա այդ լուրը ծանր ազդեց, սկսեցինք պահանջել, վոր նոր հարձակում սկսենք, նրա վրեժն առնելու: Հեշտ բան չեք կորցնել այնպիսի մի մարդու, վորն այդ կովի սիրան ու հողին եր, և վորը ծանր բուսեաներին մեզ միշտ քաջալերում եր:

Նահանջեցինք մինչև Բոլուկ-Վեդի: Որ-որի մեր դռաթյունը ծանրանում եր, հացի, հազուստի և զինամթերքի կարիքը սուր եր զգացվում: Չորս կողմից կարված ելինք և ոգնություն ստանալը հրաշքի պես պիտի լիներ:

Մի որ ել հանկարծ հեռվից լսեցինք մի տարօրինակ ձայն: Բոլորս դուրս թափվեցինք և սկսեցինք ուշադիր նայել ու լսել: Չայնը մոտենում եր: Վերևում յերևաց մի այրերուպլան...

Մերոնք պատրաստվեցին կրակ բաց անել. նույն իսկ մի քարի տեղից կրակողներ յեղան, մեկ ել այրերուպլանը յերկար կարմիր շոր թողե և սկսեց ցած թափել թերթեր:

Այերուպլանը մերն եր: Ինչքան վոզկորվեցինք... Ամբողջ ֆրոնտում սկսվեց յերգն ու պարը: Իաշնակցականների գորբն ել այնտեղից եր սկսել ուրախանալ, ստելով, թե այրերուպլանն իրենցն ե, գնում ե Զանգեզուր...

Զանցավ 2 որ, մթերքներ ստացանք, Այերուպլանը դրամ եր տանում: Մի քանի որից հետո, 1921 թ. մարտի 4 ին, յերեկոյան Յերևանից ռազմաճակատ հայանեց, վոր Կարմիր բանակը մտել ե Յերևան:

Այս լուրն ավելի վոզկորեց: Ֆրոնտը դարձավ հարսանքատուն: Կանչում ելին:

— Դեպի Յերևան...

Կանչեցինք նվագախումբ, միաինգ արինք: Յեվ նույն զիշեր ել հրաման ստացանք, վոր լուսաբացին շարժվում ենք դեպի Յերևան: Յերկու որից հասանք Յերևան, տեղավորվեցինք գաշնակների գորարոցներում, վորոնք վոչ լուսամուտ ունեյին, վոչ ապակի, իսկ մեզանից շատերը կիսամերկ ելին: Մարտի ստոր քամին վզգում եր բաց պատուհաններով, զորանոցի ցեմենտի հատակը սառուցից ել ցուրտ եր:

Մենք քիչ մնացինք Յերևանում:

Այգտեղ եր, վոր տեղեկացանք, թե ընկ Մխչյանին Նախիջևանից բերել են Յերևան, և հիվանդանոցում ել մահացել ե ստացած վերքերից:

Մեր գորամասը նորից զնաց զիրքեր, այս անգամ Դարալագյազ, գաշնակ բանզաների մացորդներին մինչև Արաբսի մյուս ափը մի հարվածով շարտելու համար:

Յոթ տարի չե անցել այն որից, շատ բան  
զժվար ե հիշել: Բայց ամեն անգամ յերբ մտա-  
բերում ենք քաղաքացիական կռիվները և տես-  
նում մեր շինարարութիւնը, իմ կրած զրկանք-  
ները թվում են շատ հեշտ և մոռանալի...

Ղուկաս Մկրտչյան



«ԿԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ»

1920 թվին չես Լեւինականի ամերիկյան  
վորքանոցումն ելի: Քիչ տեղեկութիւններ ելին  
հասնում մեզ զրսի աշխարհից: Վերջին ամիսներին  
շատ եին խոսում «պոպոզավոր» բալլընիկների  
մասին. ինչեր ասես, վոր չեին պատմում նրանց  
մասին:

Մի լուսնակ գիշեր էր: Ամբողջ վորքանոցը  
հանդիստ քնած էր: Հանկարծ զրսում ինչ վոր  
էրարանցում լսեցինք: Տեղիցս վեր թռա և մո-  
տեցա պատճենանին իմանալու համար, թե ինչ  
ե յեղել:

Ամերիկացիները պատրաստվում էին փախ-  
չելու ավտոմոբիլներով: Շորերս հազա և դուրս  
չեկա. գոան մոտ հանդիպեցի շփոթված ընկերոջս,  
վորը վերմակը կոան տակ տված ուզում էր  
փախչել:

— Գնանք, — ասաց սարսափած ընկերս, —  
բալլընիկները քաղաք են մտել, հիմա կգան և  
կացիներով կկոտորեն, ինչպէս ասում եր միտոր  
Հոջսոնը:

Փոքր ինչ տատանվեցի, բայց մի բոպելից հետո վճռեցի.

— Ինչ ուզում են, թող անեն, յես չեկողը չեմ:

Ընկերս ուղեց համոզել ինձ՝ բայց անսներով, իզուր աշխատանք պիտի գործ դնի, շտապ հեռացավ: Յես ցանկանալով իմանալ ընկերոջս գնալու աեղը՝ մի բոպե կանգնեցրի նրան և հարցրի.

— Ո՞ւր պիտի գնաս...

— Ուր վոր բոլորը, ախաեղ ել յես... Հո չեմ ընկնի այդ անատովածների ձեռքը, — պատասխանեց ու շտապ հեռացավ:

Յես վերադարձա սենյակ: Գիշերն ել չքնեցինք... Էուլսը բացվեց: Վոչ մի ամերիկացի չեր մնացել: Վորրանոցում միայն բանվորներն էին մնացել:

Առավոտյան ժամը 8 ին քաղաքից մեր վորբանոցն յեկան մի քանի կոմունիստ ընկերներ: Նրանք վորբանոցի մեծ աղաներից դահլիճ հափաքեցին: Հազար ու մի բան եր անցնում մեր մաքրով, չերը գնում եինք առաջին միտինգին:

Այդտեղ կոմունիստ ընկերները մեզ բացատրեցին ամեն ինչ և ցրեցին այն ստերը, վոր նրանց մասին աարածել էին ամերիկացիք: Այն որից անցել ե ? տարի: Հիմա բոլորս ել

ծիծաղում ենք, հիշելով այն «սարսափը», վորով ընդունեցինք առաջին անգամ բայրընիկներին:

Ծիծաղում ենք, յերբ հիշում ենք «կացն»-ի հեքլաթը: Այժմ մենք գիտենք, վոր իսկապես բայրընիկները կացին բանեցնում են, բայց քարուքանդ չերկիրը վերաշինելու, հին կյանքը վիշրելու և սոցիալիզմ կառուցելու համար:

Լենինական

Գեղամ Գասպարյան





### ԻՄ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Պատերազմն որ-որի վրա ուժեղանում եր. գյուղից տանում ելին, ով ձեռեր ընկնում: Դաշնակների պրիստավը մասրենու փշոտ ձիպոտի և մարակի հարվածներով եր քշում գեպի դիրքերը՝ «հայրենիքը» պաշտպանելու:

Իեռ թարմ ե իմ ուղեղում աչն, վոր մեր գյուղացի Կիրակոս Մայրասպանը դաշնակ բանակից փախել եր և յեկել գյուղը: Նրան բռնեցին ու տարան կանցիլար: Վաչ նրա արևին, վաչ նրա ջանին: Պրիստավը հրամայեց Կիրակոսին գետին քցել ու շորերը հանել տվեց: Ջուր բերեք, — հրամայեց պրիստավը: — Իե սկսեք խփել...

Մի կողմից խփում եին, մյուս կողմից ջուր լցնում...

Ճիպտաների փշերը խրվում եին մաշկի մեջ և արնատում, ծակծկում: Կիրակոսը բանի ուժ ուներ, գոռաց, հետո նվաղեց, ուշաթափ ընկավ... Մարմնի մսերը թրթամ ելին խաղում:

— Խփեցեք, գեռ հոգի ունի. — բղավում եր պրիստավը:

Բայց Կիրակոսը արդեն մեռած եր:

Մեր շրջանի դաշնակ խմբերի ղեկավարներն ելին Գյուղապարեցի Աղաբեգնը և Մանուկը:

Գաղթը գաղթի հետևից. հրդեհում ելին գյուղերը, շատ անգամ տունը անվորների հետ եին վառում: Մանուկն Աղբիպոցի մի բանի գյուղեր թալանի յենթարկեց և ապա կորավ... Հետո լսեցինք, վոր նրան սպանել են Բոյուք-Վեզիր կովում:

Հասավ 1920 թիվը... Հեղափոխական զվարդիան սրեցոր ուժեղանում եր... Ե մի որ ել մեր գյուղը մտավ Կարմիր բանակը ընկ. Հովհաննես Սարուխանյանի ղեկավարությամբ: Նա համաչափին բացատրեց, թե ինչ բան ե սավետական իշխանությունը: Գյուղում առաջին անգամ ծածանվեց կարմիր դրոշակը:

Ափսոս վոր ընկ. Սարուխանյանը զոհ գնաց... Նա հասավ մինչև Նոր-Բայազեդ, բայց ընկավ դաշնակների ձեռքը: Նրան բռնեցին, ձեռեցին, մի բանի տեղից վիրավորեցին և այդ զրույթյամբ կապեցին ձիու պոչից, բաղարի փողոցներում ման ածեցին: Յեվ նրա ուղեղը թափվեց փողոցի բարերի վրա...

Այդ յերկար շտեկեց: Կարմիր բանակը նորից յերևաց. Յերանոս գյուղի մոտ տեղի ունեցավ մեծ կռիվ: Դաշնակ խմբապետները գյուղի ժամհար Վոսկանին կանչել ելին տալիս.

— Աստված սիրող, վիր սուռն մի պատուոն  
կա, թող բերի տա հն...

Կարմիր բանակը մտանում է Յերանոսին:  
Թնդանոթների վորտից դաշնակները սարսափա-  
հար փախչում ելին: Նժդեհն ել փախավ, թող-  
նելով իր հեռակից մայրերի անեծքը: Այգալիսի  
վախկոտ սրիկա և մեծախոս հիմար դեռ վոչ վոր  
չեր տեսել: Նրա անունը դրել էին «խոսքի  
փահլեան», և լեթե նորից դաշնակ գործը վորոշ  
հաջողութուն ել ունենում եր, ժողովուրդին  
պարզ եր, վոր «հաղթության» մեջ սրիկապալետը  
(այսինքն «սպարապետը») վոչ մի մասնակցու-  
թյուն չունի, բանի վոր թիկունքում նստած գառով  
փլավ եր ուտում:


Յերկու որից հետո հաղթական մարշով  
Կարմիր բանակը մտավ Նոր-Բայազեդ...

\* \* \*

Այժմ առաջվա պես չի: Եինարար և խաղաղ  
աշխատանք է չեռում ամեն տեղ: Սրիկա գաշնակ-  
ների ձենն ու գնդակը չկա: Կիրակոսի նման-  
ները խորհրդային չերկրում են ապրում, բնդմիշտ  
ազատ պրիստավների արյունոտ մտրակից:

Աշխատավոր ժողովրդի համար մի նոր աշ-  
խարհ է բացվել: Մայրերն ել չեն լալիս: Յոթը  
տարի է, վոր թնդանոթների փոխարեն մեր  
դաշներում տրակտորի ձայնն է հնչում:

Ն.-Բայազեդ      Ա.գիգ Հակոբյան



- 17. Ռ. Օրմեհյան. — Խոշոր յեղջյուրավոր անա-  
սունների ժանտախոր 15 »
- 18. Հ. Մ. Գաթայան. — Գյուղատնտեսական բանվո-  
րությունը և միջազգային կոմմունիստական  
շարժումը (սպառ.) 40 »
- 19. Ն. Խան-Սողան. — Ուղեցույց արդյունավե-  
խողարուծության 15 »
- 20. Ֆերգիմանզով. — Հավարուծ. և նրա ոգուան  
(սպառ.) 20 »
- 21. Ս. Դանելբեգ. — Կավ և ուշ, քան յերբեք  
(ազրո-պիլիս) 20 »
- 22. Կ. Կ. Մելիք-Շահնագաբյան. — Կտավատը և  
կանեփը (սպառ.) 20 »
- 23. Ս. Լուկասի. — Անդրկովկասի տնտեսական  
գրությունը (սպառ.) 15 »
- 24. Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետու-  
թյան անսահման փայտեղեն բաց քոլ-  
նելու համար (պաշտոնական) 5 »
- 25. Գրոճ. Ս. Վ. Բայանբար. — Կաթնատու կովի  
կերակրումը 30 »
- 26. Ս. Ա. Յրիճուցով. — Ինչու պետք է ցելը  
շուտ անել 15 »
- 27. Ս. Բակունց. — Գալուստի վիկը (ազրո-պաատ-  
մվածք) 15 »
- 28. Ս. Բակունց. — Կարտոֆիլի մշակությունը 20 »
- 29. Լ. Սուբոթին. — Կովի դատը (ազրո-պիլիս) 20 »
- 30. Կ. Կ. Մելիք-Շահնագաբյան. — Տրիկանեփ  
(սպառ.) 5 »
- 31. Խա. Տեր-Ներսիսյան. — Գտղատու ծառերի  
ֆլասատուններն ու հիվանդությունները 25 »
- 32. Խ. Ավգալբեցյան. — Գյուղի հողաշինարարու-  
թյունը 20 »
- 33. Արագի. — Տրակտորը (ազրո-պատմվածք) 15 »
- 34. Քալաթի. — Խորհրդավոր տրտունջներ (ազ-  
րո-գրույց) 15 »
- 35. Խնկո-Ս. պեր. — Գյուղատնտես-անտանարույծը  
և իր ազրո-գրույցը
- 36. Ս. Յրիգոլին. — Տասը պատգամ ան-  
հին (բ սպապր)

ՀՀ Ազգային գրադարան

NL0943383

1192  
1194

- 37. Մ. Խանգաղյան.—Մեղվաբնական ձևանարի
- 38. Ա. Բամաջիս Յերգնիյան.—Մասնական հերթական խնդիր
- 39. Ա. Արամաթյան.—Գուժան, թե արոր (սպռ.) 10 »
- 40. Վ. Բոյկով.—Այժն աղքատի կոմիւն է (սպռ.) 20 »
- 41. Խ. Յեր-Ներսիսյան.—Գումաղը 20 »
- 42. Բ. Կուզնեցով.—Լենինը և գլուզացիութիւն 30 »
- 43. Ա. Մուսեղյան.—Անպատու պետք է հաշվով կտրել 5 »
- 44. Խ. Յեր-Ներսիսյան.—Ինչպես պատվաստել պողատու ծառերը 10 »
- 45. Ա. Բակունց.—Սոսորջուրի կոմունան 30 »
- 46. Հ. Ազատյան.—Յեռաղաշտից դեպի սոցիալիզմ՝ կոպերացիայի վրայով 1 ու. 50 »
- 47. Վ. Մ. Միրաչով.—Տալարի վարակիչ հիւանդութիւնները 5 »
- 48. Մ. Թումանյան.—Վիկը 25 »
- 49. Պ. Քալանթարյան.—Գումաղը 5 »
- 50. Նոյեմբերի նահապարհին (ժողովածու)

ՊԱՏՐԱՍՅՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿՂԱՆՁՆՎԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

- 1. Ա. Վերմիսյան.—Պողատու այգին ու նրա խնամքը
  - 2. Ա. Մարգարյան.—Վոյխարաբուծութիւն
  - 3. Պրոֆ. Ա. Վ. Քալանթար.—Կաթնատու կովի ընտրութիւնը
  - 4. Ա. Արամաթյան.—Գուժանները և նրանց ընտրութիւնն ու խնամքը
  - 5. Խ. Յերիցյան.—Հորթերի կերակրելու և խնամելու սոցիոնալ ձևերը
  - 6. Ա. Բ. Իսահակյան.—Հանրամատչելի գրույցներ գինեգործութ. մասին
- ԳԻՄԵԼ՝ Յերեմիան, Հոգեժողովմատ՝ Հրատարակչութիւն: Պետերատի կենտրոնական յեմ գալատական գրականութիւններին, Գալիտորաժիններին: